

5190

491.99(09)

lx-84

2010

401
Ա-84

Գ Ի Մ Ա Գ Բ Ա Ի
Բ Ն Դ Դ Ի Մ

ՍԱՏԱՆ ՅԱՐՈՒՅԵԼՈՑ ԱՄԵՆԱԳՈՒՏՈՒԱԿԱՆ
ԼԵԶՈՒԻՍ ՀԱՅՈՑ

Գ ռ ծ

Լ. Սարժապետի Արարատուն



1858

Դ Տ Փ Ե Ի Ս

491.99(09)
Ա-84

2002

~~0799~~ 15/5/77
CAB. 15/5/77

113 5/1/39

Դ Ի Մ Ա Գ Ի Ա Ի

ը ն դ դ է մ

Սատան յարուցելոց ամենապատուական նախամայր
մարդուր լեզուիս Հայոց:

Գործ

Լեռքեալ վարժապետի Արարտեան:

Նախանձ տան քո եկեր զնո. և նախատինք նախատչաց
քոց անկան 'ե վերայ իմ. Սաղմ. կը. 19:

Զե Թէ Թշնամւոյն նախատեալ էր, համբերէի արդ-
եօք. և կամ ատելւոյն մեծարանեալ էր 'ե վերայ իմ,
Թաղէի արդեօք 'ե նմանէ և իսկ դու մարդ հաւատար
իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ: Անդ. ծդ. 11. 12:

Նախիւք նախընտաց Լեռնաւիան, Լատիճանուոր և Լպտեա
Պարոն Լեքոսեայ Տէր Ղազարեանց 'ե յիշատակ հաղւոյ
հանդուցեալ Լազ Բահանայ Տէր Շարութիւն հօր իւրոյ:



1858

Դ Տ Փ Ի Ի Ս



Ի Տպարանի 'Արարտեան Հոգևոր Դպրոցի Հայոց ընծա-
նոց Լեռնաւիան Լազ Գեորգայ Արժրունոյ:



12465

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

Съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ

Ценсурный Комитетъ узаконенное число экземпляровъ. Тифлисъ, 31-го Декабря 1857 года.

Ценсоръ Кайтмазовъ.

8881


7038.07



Բարեւերունդ, Աղաազգի Ողբմամբ Տէր իմ Աւերի:

Սէր ոչ գաղի, հաղ ոչ կլանի,
 Աւեր գետոց ոչ կալանի.
 Մին 'ի գործս, մեւսն 'ի կործս,
 Արրորդն յախանս փրկեայ, ծփի:
 Սապէս և սիրտ շնորհատարտ
 Տեւեալ խորին զգացմամբ բարդ բարդ,
 Թռչի շրթանց ընդ շուրթն գրչի,
 Հոլանի կիրս անգիմամարտ:
 Թող ապա Տէր և ես զին
 Աշխոյժ եռանդն հոգեհիմն
 Առաջի Չեր միշտ Թափեցեց,
 Իբրու արխառը ուղերձ իմն:
 Այս լեռնեան ձեր նպատակց
 Յօդաւ մանկանց համալնեց:
 Օկրօնի և զեղունի
 Խնուլ բերանս գիմամարտից:
 Օրմէ լուել յուժի ոչ եմ,
 Չերբակալել խի կարող չեմ,
 Թէ 'ի փորուն, Թէ 'ի բազմին
 Հաւատարիմ զիս ճանաչեմ:
 Մաղթեմ առ Տէր օրհնել Չեր տուն
 Բոտ մեծի Հօրն Արքահամուն:
 Ստաւիանալ, մշտապատու
 Լինել Չեղ ծառ հեռն այգւոյն:

Ա. Արարիքեան,



1. Էդուարդ Կարա-Ռէ-ն և Տադէւազիւր Զայոց 'ի Կարա-Ռէ-ն:

1. Զայոց իբր անդրանիկ ազգ Լաւրոյ և որպէս յարե-
թատերունդ աւագապատիւ ժողովուրդ արեւելեան 'ի սկիզբանէ
աշխարհի ըստ վիճակելոյ վերին շնորհաց ունին իւրեանց սե-
փական լեզու, որ ճիշդ մեծ գնելով աներկբայիւ պատմու-
թեան սկիզբաւորութեան ազգիս՝ համարի մայր, վաղեմի, ա-
ռաջին, երկցադոյն և հարազատ, ոչ մութացիկ, ոչ կարկառ-
եալ, ոչ անհոգեալ, և ոչ 'ի փոխ առեալ յայլոց, այլ
նախամարդոյն Լաւրոյ պարզ և պսակ բանականութեան
շնորհեալ ամենիմաստ Լաւրոյ պարզեալ գեռ 'ի խանձարուր
նորածին կենաց և անմեղութեան վիճակի նորա, մի միայն
դպրութեամբ կրտսեր ժամանակաւ, այն է զինի լուսաւորու-
թեան իւրոյ Քրիստոնէական լուսով: Լաւր լեզու իւրով
բնատուր անդուգական արժանաւորութեամբ, և 'ի հոլով
բազմադարեան ժամանակաց անայլայլ և անեղծ մնացեալ իւ-
րով արժանադին յատկութեամբն բարձրագոյն պանծայ
ցայսօր 'ի շրթունս դրաց բանիւրուն մերոց՝ Վարդապետաց, ոչ
միայն զմերազնեայս, այլ և զհայերէնագէտ օտար գիտնականս
'ի մեծ զարմանս գրաւեալ:

2. Սի Թաթ աջոյ ձեռնին հրաշալի երեմամբ տարրա-
ցոյցեալ զտառս լեզուիս նախ 'ի վէմ, և ապա յարգանտ մը-
տոց երանելոյն Մեսրոպայ՝ բազմաց Թաթա ձեռաց զօ-
րացոյց 'ի գրիչ, և 'ի միայ ճրագէ անտիանհամար ճրագունք
լուցան 'ի սփիւռս, և դժուարութիւնք՝ որոց տանէաք 'ի
խորթ զպրութեանց Յունաց, Պարսից և Լատիւնաց անհետ-
ցան 'ի միջոյ, և ցայնժամ՝ օտարացուցեալ մեր գրեանք, և
տառաւորաւոր պատգամք հին և նոր կտակարանաց 'ի հա-
րազատ մայր լեզու իւրեանց փոխեցան: Եւ ահա վարժա-
րանք բիւրաւոր աշակերտաց բացան, և պարք բանաւոր մեղ-
ուաց յաջ և յահեակ թուուցեալ յիմաստալից ծաղկոցս
Յունաստանի և Իտալոյ, և դարձեալք անտի 'ի հայերէնիս
իւրեանց անմահանիւթ պարենիւք, զարմանալիս և մեծամեծս
զօրծեցին, և իրաւամբք կոչեցաւ դարն այն ոսկի:

3. Ոչ պակասեաց Զայաստան ըստ ներկոյ ժամանա-
կին, և ըստ կարի իւրոյ ճիշեալ քաղաքական վիճակի 'ի վեր

Հանել հետ դհետ զգոտս մատենագրաց, և ընտլ զյաղուրդ և զծարաւ որդւոց իւրոց առատալիւ սեղանովք դիտալ թեանց: Բարձաւ Թագաւորութիւն մեր, անկան պարտաւք քաղաքաց մերոց, լուկին ձայնք զընտց քաջամարտիկ մերոց զօրաց և զօրաւարաց, վտարանդի տարազրեցաւ աղգ մեր յերեսաց շրջապատ թշնամեաց 'ի տար աշխարհ, այլ ձայն գրչի ոչ լսուեաց երբեք. նա մենացեալ 'ի վայրս անմատչելիս՝ է զե վայրաց զխաւարեալ բաղդ աղգիս, և է՝ զի միլթարեաց զինքն հոգեւոր յուսով զանմահ պարճանս աղգիս 'ի գիր արձանացուցեալ, և հայրենի կրօնի և եկեղեցւոյ իւրոյ ամենայն ճգգամբք չափ անոյեան ասպարիգեալ:

4. Ղահանայով զՄոսուծոյ դոն և այժմ՝ 'ի դարուս մեր մեղուածան Հայկաղն աշխատասէրք թուոյ ոչ նուազուր, յորոց երակս և յողիս ջերաջերմ եռաց դեռ նախնաճ առաքինութեան Նախնեաց իւրեանց, և յաճախեն օրսուր 'ի մեղ զխոնականք ըստ ամենայն տեսակոց այժմեան գիտութեանց և արուեստից: Համենայն ծաղաց երկրի՝ ուր միանգամ աղգ մեր պանդխտացեալ տաւաղե ընդ թեովք աղատութեանց բարեկարգ տեսլութեանց, անպակաս լսել լինին բարի բարի համբաւք ամենագովանի արդեանց և վատակոց նոցա, և ոչ փոքր գրուեն զախրտս մեր և զհոգիս, ցոյցուցեալ յաչաց մերոց անընդհատ դարսօրս ուրախութեան:

5. Առտահայք ևս ոչ յեանեալ դտանին յայսմ աղգային պարճանաց. ունին նոքա ևս իւրեանց ուսումնական, իւրեանց վարժարանս և տպարանս յայս և յայն երեւելի քաղաքս: Որք ամ ըստ ամէ յօրինեն զպէսպէս դրեանս և արպագրեալ ծաւալին ամենուրեք 'ի զմլացուցանել զպատք ուսման մերոց մտալարժ մանկանց:

6. Հեղինակութիւն այսօրինակ երկասիրութեանց յերկուս դոտս որոշի: Յառաջագոս հեղինակք համարին նոքա՝ որք ժառանգեալ իրօք զգիտութիւն ինչ ինչ լեզուաց և արուեստից՝ կողմն յանձանց կամ թարգմանեն Արքայական մատենից զպիտանի բանասիրական և դպրոցական գրեանս, մերթ ինքնայօժար սերով 'ի նոյն բերեալք, և մերթ յաղգասէր իշխանոց խրախուսեալք:

7. Ստանազիրք երկրորդ դոտու են՝ որք գիտուն դո-

յով մի կամ երկուց լեզուաց և ինչ ինչ արուեստից՝ ըստ բնատուր շնորհաց իւրեանց ոչ Թերմանն ծառայել աղդին ըստ առաջնացն շատ կամ սուղ, բայց հարազատ իւրեանց աշխատանք:

8. Եւն և ոմանք՝ որք ըստ իշամեղուաց սովորեալ են կետլ օտարադուլ վատաւիօր, դուրով անուսու մն՝ աջնին ճայլ-
օրէն, մնւրան աստի և անտի զաշխատանս այլոց, տպեն զայլ-
բենարանս, զսաղմոսս, զժամագիրս, զաղօթատետրս և զնմանիս, և անպատկառ ներտին համբալ ի մատենադիրս՝ ի մարդկանէ հանդոյն առականեալ պրտուէ ագործին (ճիւլպ, խիրդործող) սպրդելոյ՝ ի շարս մտապրանիս թ և սակեթել արհեստաւորոց շորթել պարգէ ինչ յարքայէ: Այսօրին ի միոյ կողմանէ ի թան և զարթուցիչ են ծուլատէր դիանոց, որք պարագայրդու ի կամ այլովք անողտակար առարկայիւք զպատուական ժամանակ իւրեանց վատեալ՝ ոչ շահեցուցանին զքանքար շնորհաց իւրեանց ի պէտս աղգակցաց: Յայլմէ կողմանէ նուաղեն զյարգ ճշմարիտ դիանոց, շամանդաղ թանձր զերկամբք նոցա սիւսելով. որսան զպարզամիտս յանձնառուս ծախուց տպագրութեան դրոց իւրեանց, խոտանալով՝ կամ լաւ ևս ատելով, խաբելով զնոսա, թէ անուանք ձեր գրողնոցին շքով ի ճախատ գրոյն, և աշխարհ համօրէն ծանուցեալ զձեզ՝ դախեցէ զսղգասիրական առատաձեռնութիւնս ձեր և զատուածուպարգէ հարստութիւնս, և սովին խայծիւ փառասիրութեան ցեց և ուտիճ հանդիտանան պիւութեան քսակաց նոցա ի յագուրդ իւրեանց զօշաքաղութեան, գագ ոչ մաղաշափ շահաբեր աղգայնոց եղեալ: Սակայն տրաւոջ և տժգոհութիւն լողան միշտ ի շրթունս նոցա, ծփան անհանգստութեամբ իրրե զծով մրդկայոյզ, թէ բաղբում աշխատիլք և տախտաւնիլք. քրտուք մեր ոչ լիով պողաբերեն, զընանք մեր ցրուեալք ի գիւղս և ի քաղաքս մնան անվաճառ. զծախա ճանապարհին անգամ չհանեալ: Արիպում է միմ վատեալ ի զուր զփողս և զժամանակս ի տպագրութիւն դրոց: Արեն լեզուաւ, այլ սրտիւ ոչ ձեռնթափ լինին ի դիտաւորութեանց իւրեանց, զի այս է նոցա ընդարդս արհեստ տպրանայ:

9. Այսօրինակ նորատիպ դրեանք աճեն, յաճախեն օր

ուուր, գրադարանք զարդարին փառակազմ մատենիք, և նորանոր գրավաճառք ելանեն 'ի միջոյ, մինչև ասել ընդ առախ, թէ մատենադիրք յոլով են քան զընթերցողս, և գրածախք անցանեն զթուով գնողաց: Եւ մեզ արժան էր և վայելուէ զՍտփսիսն բան փոխիտութեամբ կրկնել, ընտացր մեզ զամենայն ժողովուրդս Հայոց տեսանել 'ի հեղինակս և 'ի մատենադիրս: Թուոց. Ժա. 29. Եւ թէ ուրախութիւն մեր այս ըստ ամենայն մասանց լինէր հիմնական, և ուրախարար առարկայն ուղղալ 'ի շնոթ թիւն ազգի և կրօնի, և ոչ ընդհակառակն 'ի միաս և 'ի քալուածն լաւութեանց և պարծանաց Հայոց, Հաւաստին առածք Նախնեաց, թէ չիք անտառ առանց ճագարի. չիք անդ անմոլելիկնդ. և անորոմն. և 'ի վերջոյ չիք բարի առանց չարի: Բոտ այսմ ունաք 'ի նախադաս մերոց Ստանազարաց ոչ 'ի վաղուց ժամանակաց հետէ իբր լուսաւորութեան աղագաւ և եղբարց իւրեանց օգնելոյ և բարխառնելոյ նպատակաւ, ստտան յարուցեալ են պանծալի լեզուիս մերոյ, մերժեն զնա ծայրագոյն արհամարհանք, պարծենան նոր լեզու ստեղծանել, ըմպահիկն և խոտանս գրեն զպատուական երկս մերոց Թարգմանչաց, և զառ 'ի նոցանէ ճախացուցեալ և շքեղադարձեալ լեզու և զգարութիւն Հայկական գուն գործեն հիմնայատակ կործանել. պատճառելով թէ գրալեզուն Հայոց հնոտեալ է և ժանգոտեալ, մեռեալ և ումպեա, և ոչ կարէ լինել միջոց լուսաւորութեան Եւրոպացւոց, զոր ցանկամք (ասեն) հաղորդել մերոց ազգակցաց:

10. Եւ թէ քանի քանի բարեբարոյ պատանիք խմորին յայսպիսի առարկութեանց նոցա, որքան տղայամիտ անձինք հաւատ ընծայեն կեղծուպատիր բանիցն, և որպէս խորթանան փոքր առ փոքր 'ի հայրենի աւանդութեանց, յեկեղեցական կարգաց և կանոնաց, և պաղ սրտիւ ընթանան յորէնս և յուղին ազգութեան, և որքան մեծամեծ փեսոք և խմբարմունք յառաջ զան աստի, անհնար է ինձ թուել զայնպիսիս մի առ մի. զայս մի ինչ կարեմ ասել հրապարակաւ, թէ Լեզու և Սրտն են երկու հաստատահիմն սիւնք տաճարի ազգութեան, 'ի խախտիլ միոյն հարկաւ խախտի և մեան, ուրով և կործանի ազգութիւնն: Որ ունի ականջս լռելոյ լուրջ է:

11. Առաջին համախոհ, կուսակից, հետամուտ և ջանադուր աշանդատարուս նորասիրացս է Ստեփան վարժապետն 'Լազարեանց՝ որդի Տիկիկայ Լորաշէն եկեղեցւոյ երեմին միաբան հանդուցեալ Խոյնցի Եսայեայ քահանայի, որ ծնեալ 'ի Հալաբար, անեալ և ուսեալ 'ի Երեսնեան Ուսումնոսարանի Հայոց քաղաքիս, և զամս վեց աշակերտեալ ինձ 'ի հայկական դպրութեան 'ի 1852 թուին զնաց 'ի Վօրբաթ և 'ի Համալսարանի տեղոյն լուսւ դիպուս և դարուեստս, և յաւարտ ուսմանն ամուսնացեալ լէ գերմանացի աղջկան՝ ոչ ևս դարձաւ առ իւրսն, այլ նախ վարժապետ եկաց լիզուիս Հայոց 'ի Ղազանեան համալսարանի, և արդ 'ի Ղեմազանի Ասեմափայլ Տեաքց Լազարեանց դասառու է ասեն լեզուի Պարսից և Տաճկաց:

12. Ուսումնականս այս յետ մտանկոյ իւր 'ի Ստեփան սկսաւ հրատարակել դրանի մի հայերէն գրեանս իւր 'ի շահ և 'ի շնորհս մանկանց Հայոց: Արոց անուանք են, Հոգեբանութիւն, Արդարադատարան Կրօնի, Հոգեգէշ Կերպար, Հանգիստը Հայախօսութեան օր, Էսքս: Բանգ գերիւսս ուսուցեին տնտրակս տպեալս 'ի Ղազան յամս 1844 և 1846, որք վերաբերին պատմութեան, Վարդութեան Հայոց 'ի նոր և 'ի հին ժամանակս: Յայս ամենայն գրուածս նորա քննութեամբ բխր ան իրաւացի և անխնայ անարգութիւնս և անտանելի թշնամանս առ համօրէն աղքս Հայոց, առ ազգային բազմաշխատ Վերանայանս, և առ լեզու մեր:

13. Մարգէ և թշնամանէ զիշխանս և զժողովուրդս մեր առհասարակ, որպէս թէ կոյր իցեն, և ոչ տեսանեն և ոչ յարգեն զինքն և զկրօնապիսի գիտնականս ըստ արժանոյն, Ժլատ իցեն, և ճշգրն առատաձեռնել նպատաս 'ի լուսաւօրութիւն որդւոց իւրեանց և այլոց: Ետնապէ և շարաշար հայհոյէ զազգային գիտունս և զվարժապետս քնդ ողորմելի եկեղեցականաց մերոց, թէ անտայեալ են հիմանալութեամբ, կամակորին հանդգն կռապաշտ Սինէացւոց, ոչ սիրեն պիւրաւ նորոգութիւն, բանակալ լինին վայրապար, ոչինչ պաղարեւեն յօգուտ ազգի, բայց փայն զովմանս համառօտութիւնս հին քերականութեան աստի և անտի մութացեալս, և ձախոյ ձեռամբ կարկատեալս, զորս համարի զարգ խաբեքայութեան, և ինքն որպէս թէ համայն ուսմանց և գերաւթիձան մակաւ:

ցութեանց հսկայ լցէ, զնոսա Հիւրիայի Լիւր-իս անուանէ ուր
ինքեամբ: Եւ թէ միակողմանի գիտունք են, (որով զինքն
բաղմիակողմանի կամ ամենակողմանի գիտուն համար) բաց 'ի
քերականական և ճարտասանական արուեստից ոչինչ գտանի
առ նոսա, որոց չոր ու ցածր կանոններովն աղիտարար տա-
ռապետցոյցանեն զողորմելի մանկունն յուսումն հնախօս լեզ-
ուին, թէպէտ մեր մինչև ցայժմ ոչ զիւր փախուի ու գէր
կանոնն տեսաք, և ոչ թէ զնորօք կրթեալ մանկունն դիւր-
բնիւղ ոճով և եղանակաւ դասատուութեան առանց նեղու-
թեան և տառապանաց: Աղովէ և զլեզուն և սաստիկս դա-
տապարտէ, զի անհասկանալի է և անօգուտ, մեռեալ է և
անկենդան, ժանդոտեալ է աննորոգելի հնութեամբ, և ան-
պիտան է վասն հասարակաց:

Եւ դեռ 'ի բերանոյ հասարակաց ոչ որ լուաւ և
լսէ տրտունջ և գանգատ զմերոյ անսաղիւտ պատուական
լեզուէ բաց 'ի գոհութենէ և 'ի գովութենէ. ընդ հակա-
ռակն քաժմէն ամենայն միտք և ազադակ մեծ է վասն նոր-
ընտիր լեզուին Նազարեան, զի ոչ միայն անհասկանալի մը-
նան նոցա ամենայն բանք նորա, այլ և այնքան օտարալեզու
ձայնք և հնչմունք են 'ի նոսա սպրդեալք 'ի զանազան աղ-
ղաց Աւրոպացոց, մինչև զրեթէ կարդացողք նոցա նախ ա-
շակերտել պարտին այդոցիկ լեզուաց մի քանի ամ, և ա-
պա թէ կարացեն խելամուտ լինել այնպիսի օտար բառից
անձամբ կամ օժանդակութեամբ բառարանաց:

14. Բանիրունս այս աշխատասէր է յոյժ, և աշխա-
տասիրութեամբ իւրով հասեալ պատուոյ և աստիճանաց,
ունի և ուսումն ոչ փոքր, այլ աւագ, զի բազում դպրու-
թիւնք իւր 'ի միլլրութիւն դարձուցանեն զնա, և նա սխալի
մեղանչէ և ղթէ յամենայն ձեռնարկս իւր, և չ'իք ոք՝ որ
հաւանի այսմ ընթացից նորա, և չ'իք՝ որ ոչ տակալ, քստմ-
նի և վշտանայ ընդ գրուածս նորա, տեսեալ թէ ամենայն
յառաջաբանութիւնք գրեանց նորա բուրեն զհոտ կուռոյ,
լսելի լինին ձայնք նորա-Ռեան, նորակացո-Ռեան, նորախօսա-Ռեան,
բանաստեղծական հնարազիւտ ճարտարապետութեան, իւր նոր
Բեսեղի լցեալ նորով շնորհօք կազմել, կերտել նոր լեզու,
նոր բարբառ վասն հայկազանց, խոսկեալք շնչեն ընդ միմ-

եանս ասելով , , Օրհնչ կամեցի սերմանալապա այս խօսել . Վարժ . մէ . 13 . Եւ որպէս զեղու Հայոց իբր 'ի մեռելութենէ յարուցանել , և նոր կենդանի լեզուաւ ընդ կենդանեացս խօսել , և մի՞ թէ պահատելի որ 'ի Հայոց , որ այսմ բազմակիւն ինն տարակուսականս հարցման արասցէ զբացատրութիւն կամ զպատասխանի : Ի սել զայսպիսի մորմնալիւր միմունջ և աղաղակ արդար և զանց առնել , մեղք և անօրէնութիւն է անբաւելի . Այ՛ , որ գիտցէ զբարին , և ոչ առնիցէ , մեղք են նաւ : Ենեւ զխախտեալ միտս մերոց դեռալթիթ մանկանց պարոք են ամ գիտնաւորի , առանց հայելոյ թէ հակառակորդ մեր անհամոզելի և անխորիւն լինի մեան յիւրեանց յանձնապատան յամառ կարծիս և 'ի գործս :

13. Պ . Եւ զարեանն դադարեալ առեալ ինքեան զՏանթէ Խալայցի , զԼուսէր Սարալին և զՄեծն Պետրոս զառաջին Վայրեն Ուստաց ձեռնարկեալ է փախսիւ զեղու մեր ըստ նոցա , և հնարել , հայթայթել զայնպիսի իմն բարբառ , զի անխտիր դիւրեմաց և հեշտընկալ եղեցի մանկանց աղայոց և առհասարակ արանց կառարեւոց հասարօք և մօօք , առ որ տքնի , ճգնի և զամենայն ոյժ մտաց 'ի գործ դնէ հասանել նպատակին խրում , զպատմութիւնս վերադրեալ արանցն մի ըստ միով : վեր 'ի վայր քրքրեալ , դառ մեղ չվերաբերեալ փաստս զրաճան աշխատանօք բարձրաձայն քարոզեալ յառնիս ամենայն Հայոց , և զինքն արդարացուցեալ և նոր բարեկամ երևեցուցեալ , զի կարացէ զսխալ կարծիս իւր արձակ համարձակ ցաւցանել օրինաւոր , ջնջելով 'ի մերտաց մերոց զոք և զփափաղ ամենապատուական լեզուիս Հայկական , 'ի գիմադրութիւն այսմ առանց ընդերկար ժամանորոյս լինելոյ՝ տեսմ :

16. Եւ 'ի թէ լեզու մեր ուշ դնելով ամենայն հանդամանաց նորա մի է և ամենայն ուրեք ամենայն հայադիտի միակերպ հասկանալի և միակերպ շարադրելի . և յստուի լեզու իմանալք զայն , որ յառաք նահապետին Եղի հասեալ է առ մեզ և պահեալ կուսութեամբ և անտարատութեամբ 'ի պատուական գրութիւն երանելի Հարց մերոց . հասարակեալ և ընկալեալ է յամենեցունց և չունի պակասութիւն , զի որ

Համարձակեցի ուղղել զնա, և 'ի կամս գրողն է պարզախօս լինել և ոչ խրճնաբան, զի ամենայն ոք Հասկացի և 'ի միտս ուցէ առանց դժուարութեան: Եւ ոչ աշխարհիկն այն աղճատեալ զանաղան և տարբեր յամենայնի ըստ տեղեաց և ըստ բնակութեանց վիճակի ազգիս Հայոց, զորս յանհնարիցն է կամ զամենեւեան զնոսա միաւորել կամ զմին 'ի նոցանէ բնորել, և ամենեցուն առնել ընդունելի և գործածական: Իսկ թէ տսէ Պ. Վաղարշան՝ ես քաջ ճարտարապետ գուլով, հանձնորեալ եմ՝ զեղանակ այդմ՝ բառնալով 'ի սպառ յԹաթառէն զամենայն օտարաձայնս, և զանազարեալ հնչմանս, և զամենայն բառս և զոճս դրալեղուն մերձեցութեալ, փոխեմ միայն զվերջաւորութիւնս բառից, և զշարագատուութիւնս նոցա, և այնու հետեանալի առնեմ զբանս իմ, և ժառանգեմ զանուն և զփառս նորոյ լեզուատակի, որ իսկ յոյժ վերապատուելին այդու եղանակաւ իւրով, զի վասն հասարակութեան չէ այդ նորալեզուութիւն դիւրինանալի, այլ նորասերական անախառնութիւն պարստելի և գայթակղելի, զի ոչ նորա լեզուաւ խօսի, այլ իւրովն՝ որ է ճիշդ դրաթառ յանդիւք և շարիւք բառից միայն որոշեալ: Եւս հետեւելով Տանթեայ, Սուտերի, Սոմնոտիւի և Վարանդեայ՝ զի ոչ ունինս փոխիսել, զի ոչ մեծանել, զի ոչ մաքրել և զի ոչ նոր քաղաքական լեզու յարդարել վասն Հայոց, Սեղաք ուղգացդ խառն էին, անկանոն և անարուեստ, և մին զմիւսոյն ոչ հասկանայր, չունէին մեր պէս ճախարակեալ լեզու համեղական, հարկէր նոցա լուազունի, կանոնաւորի և դիւր հառկանալոյ զհետ լինել, ուստի և զհետ եղին և արարին իոգ: Մեք չունեւով պէտա, զուր ջան և անօգուտ վատտակ է գործել զայսպիսի անարժանս ընդդէմ՝ ամենարժան լեզուիս Եւրամեան:

Եղբարք մեր բնակեալք 'ի Տաճկաստան, 'ի Պարսկաստան, Ղազղիս, 'ի Սիբս, 'ի Ռուսիս և այլոք այդու տաշնարդութեամբ ոչ երբեք կարեն շահիլ ինչ և փոխել զի բնաց արմատացեալ նախնական խօսակցութիւնս, որովհետեւ դիւրին է նոցա, վայելուչ և փառք անմահայիշատակ Վախնեաց իւրեանց Եղամախօս բարբառովք վարել և վարժել, քան նորոյ Վաղարշան նորահանդէս Հայախօսութեամբ, որք

լեզուի եղծմունք , խախտմունք կանխաց և կարգաց նշման ,
 ընդ քան յուստի իմն շինու թիւն և օգտաշահութիւն ամե-
 նապայծառ : Դպրութեան և Լեզուի Հայաց :

17. Երբորդ՝ ամենայն ցանկացող աշխատիլ և գրել
 վասն հասարակաց ազատ է գրել ո՞ր Տարատիւ և կառնա-
 ռանց ձեռնամուխ լինելոյ 'ի նախկին մայր լեզուն, մեռեալ,
 անպիտան և աննորոգելի հնութեամբ ժանդոտեալ՝ զնա ան-
 ուանելով . 'ի ժամանակս մեր յամենայն տեղիս ըստ իւրեանց
 բարբառաց խօսին և տպեն զբազում ինչ Տարառ , բայց ոչ ոք
 'ի նոցանէ խօսի ինչ ընդդէմ լեզուին , և ոչ որ 'ի նոցանէ
 այնքան ըմպահիէ զնա , որպէս Ուսումնականն 'Խօրքատեան .
 որ անսանձ զըսու ոչ դադարի թափել զանարդանս 'ի վե-
 րայ լեզուին , և 'ի վերայ պաշտպանողաց նորա , ազէտս և
 իմաստակ կարգալի : Հասարակութիւն մեր ըստ մեծիմա-
 սին անգրագէտ լինելով , մի և նոյն է վասն նորա քան զը-
 րարառ և աշխարհաբառ , սկանծք նորա անսովոր ընթերցա-
 նութեան , ունի է տեսլ վասն նորա գիրք եւ ծառեան , կերտիւր
 եւ խորթիկ , անլի եւ ամեն , հոս եւ կրօն . բեր նախ ուսուցաւք
 նմա գրել և կարդալ , բեր նախ խօսեցուք ընդ նմա մտքուր
 հայերէն ժամանակս ինչ , և ահա տեսցուք , թէ հասկանայ
 նա զամենայն , և զոր թիւրակի արտասանէր Լատոմ , աղբէր .
 մէր . հէր . քուր . աշկերտ , ճախիայ , աղունակ , ևայլն . ինք-
 նին ուղղեցէ զսխալնս իւր տեսելով՝ Լատում . եղբայր .
 մայր . հայր . քոյր . աշակերտ , ճանապարհ , աղանի : Որպէս
 տեսանեմք փորձիլ 'ի նոր ուսանողս , ապա յորչափ անուսումն
 են նորա , որով լեզուաւ և գրեցեց որ , անարդիւն մնացէ
 աշխատութիւն իւր , և հասկացողութիւն խաժամուժին եղլցի
 յերազի և ոչ յարթմնի :

18. Երբորդ՝ լեզու մեր գոլով որպէս քաղաքական , նոյն
 և եկեղեցական , և նմ մատենադրութիւնք մեր գովին լեզուաւ ,
 'ի հնարագործել նորոյ հեշտիմաց հայախօսութեան հարկաւ
 զհետ դայ զամենայն աշխարհական և զհոգեւորական գրեանս ,
 զարձակս և զգալեալանեալսն նովին լեզուաւ յարմարել , ա-
 ռաջին՝ թէ ո՞րքան աշխատութիւնք և ծախք պիտոյ են առ-
 այդ , 'ի փոխել զնսա 'ի հնոյն 'ի նորն , և տպագրել վերս-

տին, ամենայն ոք կարէ իմաստասիրել: Երկրորդ՝ ժողովուրդը
ընտելացեալք բառից և ոճից գրաբառին, և ոչ փոքր 'ի բե-
րան առեալք զալթթա և զժամերգութիւնս մեր, և այժմ՝
լսելով զբանութեամբ փոփոխութիւնս նոցա, կիսով հայե-
րէնս և կիսով այլազգ. յանդաւորեալ, ամբողջութիւն
բառին հայերէն Բնացեալ, և ծայրքն միայն անօրի-
նակ անձոսնի մեանկօք այլանդակեալք և թլիստեալք,
շրտաքեալք խրատացուն անշուշտ ականջօք և մտօք, և ոչ
միայն չքաղեսցեն օգուտ յայգպիտի խառնախնթոր արժանա-
ծանակ հայափօսութենէ, այլ թերեւ դադարեցին նաև 'ի
կանխելոյ 'ի տունն Ետառծոյ, նշովս կարդացեալ անձանց
չլսել միտանդամ՝ զայնպիտի խառնադուժ բարբառ: Եւ հե-
ղինակ այսպիտի գործոյ փոխանա՝ բարեւոյ եղցի պատճառ չար-
եացոյ և որպէս ասի՝ ունքր շինելոյ տեղ աչքն էլ կըհանի.
ուզելով կորուստերիչ գնալ՝ ագաւաւտերիչն էլ կըմոռանայ:
Իսկ թէ ասէ վարդապետն՝ Նաղարեան, թէ ես ընդ եկեղե-
ցական գրեանց գործ ոչ ունիմ՝, թող մնացեն նոքին նոյ-
նութեամբ որպէս Ռուսացն, իմ կամբ և դիտաւորութիւն
են զմանկունս և զհասարակութիւն Հայոց լուսաւորել, թող
մեռելոցն թալել զմեռեալս իւրեանց, մեք զնիկ նորոյն գը-
նացուք, այդու ևս սխալի չարաչար, յերկուս հերձելով ըզ-
լեզու մեր և զազգ. և խորոց արկանելով ընդ մէջ ժողովուր-
դականաց և հոգեւորականաց, միոյն ըստ նորոյն առաջնորդե-
լով և միւսոյն 'ի հնոթեան թողլով. ոմանց թաժայ հաց
ջափելով, և այլոց քարթու. ոչ լաւ ևս է մի լեզու լինել
(որպէս և էն) մի հօտ և մի հայկ, և մի՛ սերմանել 'ի
զուր երկիրառակութիւն և փոխանակ օրհնութեան հնձել ա-
նէծս յամենեցունց մինչև ցլախձան աշխարհի:

19. Չորրորդ՝ աշխարհիկ լեզուն չէ առանձին, օրիշ
և օտարաձայն, այլ նոյն ընդ գրաբառին, 'ի նմանէ ծնեալ,
և 'ի նմանէ զեկեղանութիւն իւր առեալ. և վասն էր՝ ծը-
նելոյն չնմանիլ և չհետեիլ հարադատ մօր իւրում, քան ընդ
հաիւաւակն ստիպել, զի մայրն յարմարեցի ծնելոյն: Եւս
մայր լեզու ոչ միակիսոյ է խրթնախօս, ոչ վասն ամենայն
առարկայից զմի միայն ունի ձայն նշանական ըստ ոմանց աղ-

քատիկ լեզուաց, ոչ ամենայն ունի, ձեք և դարձուածք բաշ-
նից սորա են դժուարիմաց, այլ գոհանալով զԱստուծոյ՝ եւ
'ի մեզ շատ բառք և բանք գիւրիւնք և դիւրինացք, Թնդ՝
զի գրողն եղեցի քաջ հայերէնագէտ, հեռատես, շքանկատ,
նըբազնին և անխառատէր, և ահա՛ գրեցէ և յարդարեացէ
զբանս իւր այնպէս ընտրանաւ, զի ոք ոչ դժուարացի լինել
խելամուտ: Ունիմք մեզ օրինակ զուրբ Եւտարանն, զբա-
զում տեղիս հնոյ Կտակարանին, զՀարանց Սարս, զՅայս-
մաուրս, զամենայն գրուածս Շարհաւոյն, Սարգսի՝ գա-
սակցի նորա, Իգնատիոսի, Ճոն Բարդի և նմանեաց, որք
պարզաբանութեամբ իւրեանց հռչակեալ են ցարդ, ըստ նա-
ցա կարեմք (եթէ կամեմք) զբանս մեր յերկրել: Յիրաւի
լեզու մեր խրթնանայ, մինչ գրողն գիտութեամբ կամ տգի-
տութեամբ ոչ միտ դնէ օգտի հասարակաց, այլ զինքն ջա-
նայ ցուցանել քաջահմուտ հայկաբան պարապեալ բառա-
կադութեամբ քան պարզութեամբ իմաստից բանին, և յայդ-
մանէ կարծիս առեալէ, թէ լեզու Հայոց իցէ հնացեալ և
մեռեալ, և հարկ է մանկացուցանել զնա և յարուցանել
նորաչն հայախօսութեամբ: Արդիտի անխոյնելութիւն և յան-
ցանք գրեցին ումք, թէ ունիցի երկու ձեռք աղանելիս, մին՝
ցած դիւրադին, կիտամաշ վասն հասարակ առուրց աշխատա-
նաց, և միւսն՝ աղնիւ, պատուական ընտիր, նոր, անմաշ վասն
հանդիսաւոր և մեծատօն առուրց: Եւ խորհիկ լեզու մեր Թնդ
համարեցի զգետ հասարակ առուրց վասն հասարակ առար-
կայից պիտանեաց հասարակութեան, իսկ Վարդն ասոնահանդերձ
վսեմ, ծայրագոյն և հատընտիր վասն շքեղահանդէս նիւթոց
և ձեռնարկութեանց, որովհետեւ առաջինն դեռ գուրկ է յա-
մենայն հարկաւոր միջոցաց և 'ի պարագայից, ուր ընդհա-
կառալն երկրորդն լըիւ ունի զամենայն՝ և տէր և ծնող է
նորա. ապա ոչինչ իրաւամբք կարեմք համարել զնա ժան-
դոտ և մեռեալ, և այդու զլանալ զնորա կենդանութիւն. որ
կենդանի է 'ի սկզբանէ անտի և կենդանի մնայ ցարդ և մը-
նալոց է ցկատարած Տի կենդանի 'ի շրթունս և 'ի հոգիս
ամենայն յարդողաց և գնահատողաց նորա:

20. Հինգերորդ՝ գրաբառ մայր լեզու մեր ունի զձոխ
և զամենակատարեալ քերականութիւն, զընդարձակ բառա-

բանս և զայլ հարկաւոր կանանք և ուղղութիւնս, և 'ի վա-
ղաց անցեալ է 'ի կորգս կանոնաւորեալ և մշտիկալ լեզուաց,
և ստացեալ գալութիւնս և պարճանս յընտանեաց և յօտա-
րաց, և ընդէս մարթ է ջոյստելոյի հոյակապ արհեստաւոր շին-
ուած խախտի, քսիկ, առ 'ի կարկտեղ զայլ իմն նորա-
գոյնի զորոյ անձեռնի հրէշութիւն հանդերձեալ եմ' յան-
գիման կոցոցանել բանասիրաց աղբիւր: Իսկ թէ պնդեն վե-
տանգաւոր նարտէրդ, թէ վասն տարածութեան Աւրապա-
կան լուսաւորութեան 'ի Հայս անյարմար է Պարոյ լեզուն ա-
ծանցիլ առ մեզ զնոցայն ուսումն սկսան անուանան և զայլ-
եայլ առմանն այլովք հանդերձ, կարի անիրաւացի է քանդ,
զէ ցայտօր 'ի մեզ ոչ ստիաւ ուսումնական և բանասիրական
գրութեք մտեալ են 'ի լուսաւորեալ աղբաց, և մեծ մասն
'ի նոցանց գոյով գրաբառ, որպիսի են բանաստեղծութիւնք, պատ-
մութիւնք, աշխարհագրութիւնք, թուարանութիւնք, արամարանութիւնք,
երկրաչափութիւնք, բնաբանութիւնք կամ' բնական պատմու-
թիւնք, տօմարագիտութիւն, աստղաբաշխութիւն և այլն և
այլն, և ամենայնի սոցա լեզու մեր եղեալ է բաւական քն-
դունակ և թարգման իւրովք սեփական կամ' նորահար քա-
սիք և ոճովք, և ոչ յիմիք կրեալ զխորտութիւնս ընդհա-
կառակն և Յիկ լեզուաւ դրեալ գրեանց յամենայնի օդ-
նեալ և ընձեռեալ զհարկաւոր նիւթսն 'ի ծովաստրա անբա-
պառ շահմարանաց իւրոց, և ընդէս արդ անյարմար լիցի 'ի
շնչին ձեռնարկս ինքնապանծ ճարտասանիցն, ոչ ապուքէն խոս-
տովանին և ինքեանք, թէ առանց դրաւառին քալլաւիսի մի
անգամ' չկարեն առնել 'ի դէմեդեալ իւրեանց նպատակին:
Աւ ածանցեալն ոչ կարէ երբէք լինել պատուական, բնոր,
ճոխ և բաւական յամենայնի քան զնախտիկ մայր իւր, որ
'ի վաղուց համբաւեալ է իւրովք աստուածատուր բարեւա-
ռութեամբք:

21. Սեպտեմբրի' խախտեալ զվայելչապանծ լեզու 'Եւա-
նեոց և փոխանակ զնոր իմն սահմանել չ'է գործ միոյ դիտ-
նականի, զի առած է երկու աչք առաւել տեսանեն քան զմի:
Իսկ ընկերութիւնս պիտի ուսեալ, և քաջ ներհուն' որ-
պէս դրաւառին, նոյնպէս և ամենայն գաւառական խօսակ-

ցութեանց, և ասանց խախտելոյ զՀիմունն և զՀիմունսն այժմեան Վերականգնութեան առնել ընտրութիւն ամենայն տեսակաց բառից որոյ թի և իցեն, և ըստ այնց յօրինեցեն զՔառարանս գործածական և անգործ բառից, աստղանիշ նշանակեալ, թէ այս բառ է գործածական, և այն ոչ, ոչ հայեցեալ և յայն՝ թէ այս բառ գոյ՝ ՚ի գիրս թէ ոչ, և կամ յայն՝ թէ այս ինչ բառ ՚ի շրթանս հասարակաց լսի այս թէ ո՞ր բառ է քաղցր, և ո՞ր պակաս ՚ի Վարդի, և ո՞րով բառիւ առտել մարթէ գիւրիսնց զբան մեր առնել, և ըստ այսմ կարծեմ՝ բազմոք յոյժ փարատի մեայլ արօտաբանս թեանց ՚ի լեզուէ մերմէ, և ամենայն որ անտրտունջ տրախտիրա ընկալցի զայն, լսեալ և զաղարեալ ՚ի քանահելոյ զնա: Օյ յոյժ յոյժ բառք են ՚ի՛ հասարակաբանութեան, որք ոչ գտանին ՚ի գիրս, ուստի և ոչ ՚ի Քառարանս նոյնպէս և ոչ տակաւք են՝ որք գտանին ՚ի Վերս և ՚ի Քառարանս, բայց գործածութիւն նոցա ծակտէ զլսելիս, և խանդարէ զշարս գեղեցիկ շարադրութեանց, ահա նշանակեաց բերանախօս և գրախօս բառից և ոճոց անգամ զնաութիւն և ընտրութիւն առնելով, և ըստ այնց Քառագիրս առաջընթել, լեզուն հեշտանայ օր աւուր, և որպէս յառաջ ասացի, մի գորով նմա, յարատեւ գարձեալ յիւրում միտ թեան մինչ ցլերջ: Եւս թէ ոչ՝ մի այր յիւրում սենեկի մեռացեալ, հրամայելով գրէ իւրում՝ խելքին զօռ տալ, որպէս ստեն, և ասանց կարեաց և կարօտս թեանց արդակցաց իւրոց նախազգաց լննելոյ, հայել միայն ՚ի հեռատանէ դիտակառնք հանթեայ, Լուսերի և մեծին Պետրոսի ՚ի ցանուցիր ազգայոց, ոչ կարէ առնել ինչ, թէ և հրեշտակ երկնային իցէ, թէ և խնամութեամբ քան զՍարգիս գերազանց գացի, միշտ սխալեցի ախպիսին, միշտ անպատշաճ շարացին ցանք նորայ և միշտ այսպի կատականայ եղիցի առաջի իւր և այլոց ազգաց: հանթէ, Լուսեր և Սեծն Պետրոս ՚ի մեջ ազգաց իւրեանց կացեալ, և գրաց և բանից իւրեանց մերսնս և ջատագոյն գտեալ զուսուսք միտ յոյժոց իմաստնոց, տրտիւն այն զամենայն ինչ գովելի խոհեմս թեամբ, և ոչ յաջ և յահեակ զթշնամիս յորինեցեալ, և կոյմ ժամանակակից ուստ մնականաց զյորդ, զգիրք և զանուանս նուազել

7038-17



յով : Ուր սէր և միաբանութիւն , անդ և ամենայն դարձ
բարի : և ուր ասեկութիւն և նախանձ , ամբարտաւանութիւն
և արհամարհանութիւն բնկերաց , անդ կործանումն և անկումն
ամենայն բարեխառնութեանց :

22. Եւթներորդ՝ յապացոյց մինչ շարդ ասացեալ բա-
նիցս յառեան հանեմ զնորապալա Ստեփան Ստ . Գա-
գարեան , այնէ զՀանդէս նոր Հայախօսութեան անման , որով
ձգելու անդէր մեզ զնոր բազմօրինակ արար մշակեալ լեզու , ա-
ռաջի ասեկով զամենայն սխալանաւ նորա ընդդէմ լեզուիս և
բնարանութեան , բայց նոյն իբր յառաջարկութիւն կղից
գրեւալն յիշեալ 'ի նմանէ 'ի նոյն Գլխին յէջ 208 , սա-
կաւ ինչ վտնութեամբ և յապումամբ :

23. ,, Երեկոյ մի 'ի միտին ընդ հօրն դնացեալ յայ-
գին , ետես անդ զմեզու մի սրտացեալ յոտալն խաշոր սարգի-
ւոր բայեալ զեւր սպանալից մկրտաաձե բերան , մերձ էր
սպանանել զնա , բայց երեկոյն նախ աղաթեաց զմեզուն , և
ապա քակեաց զցանց յախշաակող միջատին :

,, Հայր երեկոյն նշմարեալ զայս՝ ասաց , իրդեակի
արդեւ կուեա զու այնքան չէն համարել զհանձար և զյա-
ջողակութիւն կենդանւոյդ , մինչև վատահանալ քակիլ զնա
բայն բազմաշնորհ ճարտար սպեռակաւն հիստամ : Եւ յամ
առախանեաց երեկոյն , մի թէ հանձար և զխառսրութիւն
սարգի չեն նենդաւոր և ողղեալ 'ի սպանութիւն և 'ի
կործանումն , բայց մեզուն ժողովէ վրան մեր զմեզը և զմեզ
'ի բժշման խր , և զմեզ շահ 'ի սարգի : Եւ զայս խի
պատճառաւ զհիստամ սարգին քակելն և զտգնիւ մեզուն
սղաակցի :

,, Գովեաց հայրն զգառաղութիւն պարզ միտ անմե-
ղութեանն որ անդանէ զհանձարն ալտարստա միայն փայ-
լուն , որը խորհուրդ է մեզու և կորստա անձնասիրութեան
կամ լաւ ևս ստել արիւնասիրութեան սղաղա :

,, Հաւել հայրն , թերեւ անխրաւեցար 'ի սարգին , զե-
ղա պաշտպանէ զդեռահառ ուղիղս խաղաղ յապախանութեանէ
ճանձկն և տխրեաց , հետեւելով զոտալն խ . 'ի վերայ նա-
ցա : Սկսեալ ասոյն կատարէ զայդ գործ , և հարց երեկոյն
վրան պահանջեալ զխաղաղ մեզ , և չէ յառեալեւ 'ի յա-

գորդ տրեւածարու թեան իւրոյ : Այն պատահանեաց հայրն, վասն խաղաղ չ'է ինչ նմա փոյլ : Որքնն՝ առաց երեխայն, բարեբար թիւնն այն՝ զոր ցտցանէ նա ակամայ, չանկ ինչ արժանալարդու թիւն, զի բարու թիւն կամայ ճանաչի 'ի միմ' բարի և զեղեցիկ իրի :

,, Կրկնեաց երեխայն, վասն էր սորդ նառի մի այն յիւրմ' ստալիկ, այլ մեղաք կեան 'ի միտին ընկերու թեամբ և մե սրանու թեամբ, և անգագար աշխատին յօդուտ Են :

,, Ասար պատահանեաց հայրն, յարագս բարի խորհրդաց բաղամբ մի այն կարեն միտնու և ընկերանու ընդ միմ' եանա : Բաշխացու թիւն վատու թեան և անճնախոր թեան կրկ 'ի մէջ իւր զպատճառ յատուկ կօծանման : Այսու խորհրդով ընալ թիւնն իմաստուն չ'է կամեցեալ փորձել զայն իր, զոր մաշդիկ այնքան յաճախ անկարելի և կորսաւոր անսեալ են և իմացեալ :

24. Հանգես նոր Հայախօտու թեան Սար. Նապեալ 'ի Մարտի յանցեալ 1857 ամի է Մարտան մեծագիր, որ առնի 4504 էջ, և իւրարանչիւր էջ 438 ասղս մանրատառ տըպագրու թեամբ, որ թէ փոքր ինչ խոշառառ լինէր, արդարեւ ստաւարանայր և թանձրանայր քան զՀայախօտ քնն մեր, և լինելով ճանրատար՝ վնայ գայր գնալին և ընթերցողին :

25. Բալանդակու թիւն նորա են առակք, առանք, բարոյական գրոյցք կամ առացւածք, խրատական խօսք, պատմութիւնք, արտաքիւլք, մատցածին առաւելք (հերթեմք) բնական պատմութիւնք, վարք Բալանդակ և Սիրասոյ, և այլ ինչ ինչ յարմար և անդարմար գրուածք : Բայց թէ այս օրմ' չեղձախոտեալ թարգմանութիւնք ազնիւ իցեն, կամ պատշաճախորք մատաղատի մանկանց, կամ աւագագրականքն վաղելիք իցեն լսեցեաց և մտաց մերոց պատանեկաց, և ոչ միտաւարք նոցա, որոց ընծայի զայնու բողբամ որքեք պարճանօք, և կամ բնական պատմութիւնք իւր ազնիւ և անսպլումբ իցեն, զայս ամենայն և զմանկաւ այլոց թողում տկանել և դատել, մի՞ զի բնագիրքն չ'են 'ի միլի 'ի ձեռն իմ, և միւս ևս՝ զոր կոչուած ժամանակի համար իմ պնդեալ հեա այնպիսեաց : Եւ զլեզուին միայն միտաւարք թերու թիւնն և զերկայնապաշ թիւրութիւնն և զմեծամեծ ող

խառնման յերևան հանեմ քաղաածով 'ի զգաշտ թխն և 'ի պէտս մերոց ար/աջան հայերեւոսէր համբակաց :

26. Ո՞չ նորա կամ լեզու համարեա թէ գլխովին է խառնաշինթ խանգարեալ, աղաւաղեալ զբարբառա : ծայրէ 'ի ծայր ծոխացեալ աննադիր վրիպանօք և անկանոն դասաւորութեամբք իբր յովինթ հրազոյն 'ի ժանգամած երկաթ ընդելուզեալ, կամ աղբււր վճիտ 'ի ժահահատ աղտաղտուկ խորատուզեալ, և կամ իբր մարգարտայեռ շքեղաձև հանդերձ կերպտեսայ շքման զգեցեալ յառատուն կոյս : Եւ կամ կոյս աչազեղ, և շքողաւորիկ հնաւի և պատառոտուն ձործովք զգեստաւ որեալ : Թեպէտ և ինքն 'ի վարդապետական սլմունի և ծանուցման իւրում պարծի, թէ այն իցէ խառնութիւնն հասարակաց, նոր լեզու, բռն և յարմի հաբառ, հանաքի և արուեստի օրմի դրած հայեանքն հաբառ բռնախառնութիւն, և ոչ վարեալ ընդ նմա որպէս բռնաշին, այլ ոչադիր եղեալ յարմարութեանց նորա, և ինքն որպէս հայեանքն հարապարտութեան, բարձրանալովս ճշակեալ զմեր գեղեկի հաբառ լեզուն : Ո՞չ որ թանկն իւր սե չեաւի, Լիցաւն էլ իւր ձաղին բլբուլն ձաղի վերայ աւելն սիրուն և համարում :

27. Եւ յեա բանի մի առդից կամեցեալ վարագուրել զտարբերեալ պարծեցողութիւն իւր, կամ զլծացեալ և խղճահարեալ, և կամ երկուցեալ 'ի կրթիկաց իբր տձև կարկատան յաւելու, և Դաւ և շատ հետի է մեզանից այն ինքնահաճոյ մտածութիւնք, որպէս թէ մեր խօսելու սձր առ մեհայն տեղ զուտ սակի էր, ամենեւին անխառն, ամենեւին անարատ : Բաւ լիցի մեր պատրաստ եղբ, և հոգով չափ սրատրաստ ուսանել մեզանից աւելն ընտիր, աւելն գեղեցիկ խօսողներէցը, և առ 'ի սրտէ շնորհակալ կը լինիր այն մեր եղբայրակիցներին, որ աշխարհիկ հայախօսութեան մէջ աւելն վարժ և կիրթ լինելով, կը կամենային սիրողապէս ուսուցանել մեզ, ցուցանելով մեր սխալանքը, մեր պակասութիւնքը, հայկական լեզուաշինութեան համար ապագայում :

Փառաւորի մեր Ուրդապետը, Լրատած կեանք սայ իրան, շատ խելօք և հեղու խոնարհ բաներ ասաց, կամք է տալի, շնորհակալ է լինում սրտիւ, որ իւր սխալները սիրողապէս ցոյց տանք իրան, ազա թող, մի փոքր ժամանակ

բանը թողնի, ականջ անի:

28. Սարգսպետն Սաղարեան գեռ 'ի 1846 ամին Ե-
ցոյց զեախոթիւն և զեամու թիւն իւրոյ գրէն 'ի հրատարա-
կելն զառուերէն տեարախն մակաղբալ , , Обозрѣніе Ис-
торіи Гайканской Письменности въ новѣйшія времена. Ընդ
այս դարձ նորա ամենախալ և ընդդէմ պատմութեան և
մատենագրութեան Հայոց բազումք բարբորեցան բարկութեամբ,
յորոց մի Սարգսպետ և մի Ղաթարհախն պատրաստեցան նը-
շտակել զաններէի սխալանո նորա, և ստատել՝ զի մի ևս
վատահասոցի յայնպիսի անկանոն ձեռնարկ և 'ի դարձ, սպա-
ռազկենալ բոլորովն զեղաւ և զգրիչ իւրեանց , այլ ես ,
վնայ ինձ, մեզայն Մատեմայ, ընդ մէջ մտեալ շեջուցի գհուր
բարկութեան նոցա և խաղիանեցի գնացայն օրինաւ որ ընդդի-
մաբանութիւն , պատճառելով՝ թէ հեղինակն ոչ գիտա-
թեամբ արարեալ է զայն, այլ ակամայ սխալեալ յիտալա-
կան Սատենէ Սաքիտայ Ղաթայի Սոմալեան, որ վասն մա-
տենագրաց Հայոց, և թէ մեզ համադգեացո նորա պնդո է
գնորարժարձ եռանդն նորոյ հեղինակի առաւել ևս բարբո-
քել , և ոչ թէ առ ետեղ շեջուցանել զայն և ընկղմել 'ի
վհառութիւն: 'Ի բանից իմոց համոզեալք արգարե մեզմեցան,
և 'ի ձեռաց զգրիչս 'ի բոց ձգեցին, մեծայրոյ լինելով՝ թէ
Սերապատուելին այն զգատանալ ունի ինքնին , և քա-
ղաքալարս թեամբ վարել և վարել զեղաւ իւր և զգրիչ ,
այլ հակառակ ամենայն ակնկալութեանց մերոց տեսաք և
տեսանեմք , թէ Սարգսպետն այն անհամակելի և անլուր
կացեալ խորհրդոց և ակնարկութեանց հեռուոր և մերձու-
ւոր բարեկամաց իւրոց, անդադար քարընկեց լինի շուրջանա-
կի առ ազգակիցս իւր անհաւրին վատարանութեամբք , խօսի
և գրի զոր կամի, և առհասարակ ազէտս, իմաստակո, հը-
նամուր և կամախորս կոչէ, որ միանգամ ձայն հանէ՝ դըւ-
ղեալ յաղղատիրական հոգւոյ, և ոչ հաւան ցուցանէ զինքն
չարսչար և համայնից գայթակղեցուցիչ գործոց նորա , Եւ
այս՝ որպէս թէ ինքն ուսեալ յԵւրոպա 'ի Վօրբառեան
Համալսարանի հասեալ է 'ի գաղտնի ամենայն կատարելու-
թեանց , և եղեալ այնքան ամենակողմանի Փիլիսոփայ և
Պաեախիոս, մինչև լինել երկրորդ Վաւիթ անյալթ , և

չունել, պէտս թէ որ ողորդեց զնա • իսկ այլքն իբր թէ
 'ի գտնոց և 'ի փարախոց երեսոյք մարդակերպ անասունք ի-
 ցեն, թափուք և ունայն յամենայն կարենոր գիտա թեանց ,
 և չ'են իշխան խօսիլ կամ ճ'իկ հանել առաջի նորա • ինքն
 նշմարեց գշնդ աչաց մերոց և փաթայ հանել գնդին • Բայց
 զդերան տեան իւրոյ 'չ տեսնեց • Է զե՛ յեկեղեցին Մատ-
 ծոյ ձեռն արխանէ կարճել զորրապան և օթն խորհարգս նորա և
 բոա կամոց իւրոց սահմանել և խօսիլ • և է զե՛ զեղբայրն
 մերոյ օձեաց ունի Զնիլ զհնաթ թիւն նորա Դճէ, և նոր ի-
 զօ կարկատե և մայնաւն նորոյ Հայախօսա թեան • Եւ թէ
 ամենայն Ռատահայք քաջ աշակեր, նորք խորինոց և յա-
 մենայնի վերահասու լինէին մտաց, խորհրդոց, բանից և գոր-
 ծոց Սար • Մաղարեան աղբեւոյք հասարակօրէն 'ի վնաս
 եկեղեցոյ, կրօնի, ազգի և լոյսի մերոյ, ոչ միայն օգնէին
 ապագայ թեան զրեանց նորա, այլ և ճարակ հրոյ տուեալ
 դամենայն մատենա նորա, խափանէին զնա մի՛ ևս խօսիլ
 կամ գրել ինչ զազգի, զկրօնէ և զեղբայր մերմէ • Եւ
 ճշմարտութեամբ ասացից, յոյժ սակաւ են՝ որք կարգանք
 զրեանա նորա, և նորա չ'է տալաւայք զապեալ ինչ, իս-
 կայն յաչաց և 'ի ձեռնոց իրեանց 'ը բաց լնկնումն զայն,
 տաղախոյս ի թշնամանաց և յանձ զբաւածոց նորա, և
 յանուանէն իսկ շտապեալք • զի միանգամ անշուշտ լեալ են
 իրադէկ, թէ այն անձն անասնձ զըտու խօսի, զոր խօսին •
 Զերկարեցաւ և յիմեց կողմանէ պատասխանատու թիւն
 քնդ գեմ ամենայն համարձակախօսութեանց նորա, զի եր-
 բմն զանց առնէի և յաչնչ զգրաւածս նորա համարել, և
 մերթ երկայնամիտ եղեալ նամակախօս միայն լնկէի
 քնդ յարգելւոյն իբր քնդ երբեմնական ինոյ աշակերտի,
 Բայց նա մչ միայն յետս կտեցաւ 'ի խորհրդոց և 'ի
 գործոց իւրոյ, այլ և պատասխանեաց մչ զբաւոր բանից ի-
 մոց, մինչև տեսաք ահա՛ ծնունդ զայն անդլախ և անտն
 հրեշ, որոյ անուն և թիւ ստիպել և պրծեալէ՛ է ամե-
 նայն Հայոյ, որ միանգամ ծայրիւ մատին մտաց առեալ է
 զճաշակ քաղցր և անոյշ լեզուին իւրոյ • զի փախանակ ուրա-
 խանալոյ յոյսմ հանդիսի Մարդապետին Մաղարեան, տիրի
 և դաւանանայ հոգեւոյ և մարմնոյ, տեսեալ զքեզապանձ

ըզու իւր խաթարեալ, վաթարեալ և անխիղճ բռնաւոր թեւամբ յալին կործանման հասուցեալ :

29. Ոգորմէրսլ վեճակի տեմել մանկանց մերայ՝ և ամենեցուն, որք միտմտ թեւամբ ընդունին զայս և զնոյնալի կործանեալ իւրեանց, օգտակարս և հարկաւորս յառաելա թիւն ուսման իրենց, բանամ և առաջն տանեմ՝ զամենայն ատկս սխալանաց նորս, և դուք տեսէք և անձամբ անձին համեմատեցէք զնոս ընդ բնագրին : մի՛ ամենայն հոգւոյ հաւատացեալ, այլ բնորեցէք զհոգիսն՝ որ յՄատուծոյ իցին : ձեզն զառաւանս արարէք, թէ այն ամենայն պատուական և բնաիր բառք մեր և ոճք ուրպէս խաղալի և ծաղրական իմն յառաջ բերին, ուրպէս անկարգ և անկանոն ալար և անոր ձգձգին բոտ կամոց որպէս աւար անտեբունչ անկեալ ՚ի ձեռս թշնամաց : Որքան բառք և աղք, նայեքան զբեթի սխալք և զարտուղա թիւնք յորինաց Հայկաբանութեան : Բայց մի՛ թէ հնար էր զամենայն առ հասարակ յայտնի կոցուցանել, և ամենեցուն միով կամ երկուսովք պատասխանի կամ քննա թիւն տանել, ոչ, ոչ, այդմ չեք հնար : ես քաղաւածով գիմ ՚ի հարկարաց և ՚ի հաղարաց յերեան բերեմ, և դուք նորք զայլ մնացեալսն կուձեցէք : Իսկ առ ՚ի զիս բա թիւն ընթերցողաց զայն ամենայն յերեքասան կարգաբաժանեմ : ՚ի վերջոյ իւրաքանչեւ բնաւածոյ կամ բառի զերեսահանարն նշանակելով, և ապա սուղ ինչ ՚ի ստորե կիմ կարծիս և զգաւորս թիւնս առկեմ, որ միայն պէտք բանիցն պահանջեն :

30. Իսկ Բառք և բանք գրարատք՝ նայնու թեւամբ յառաջ բերեալք իւր նորալիզու աշխարհաբառք յոյժ մտքը զանաղանութեամբ :

Ե. Բառական թարգմանութիւնք տարբերք բոլորովն ՚ի մարտը Հայկաբանութեան :

Զ. Օտար սխալանք ընդգեմ ըզու իս ՚ի բառս և ՚ի բանս :

Դ. Ոճք և բառք Վարդ և աշխարհիկք խոհեալք ՚ի միտման :

Ե. Տարապալման և ամենայնաճախ կիրառութիւն անկատար ժամանակաց բայից վերանայի ՚ի բնայ և ապաւնի ժա-

մանակաց, մանաւանդ ընդ դիմապսկաւ բայիս՝ պիտի է:

Է. Ըճականք ըստ մեծի մասին վերաբերեալք մարդկան՝ բռնադատութեամբ տուեալ լինին այնպիսի առարկայից, որք ոչ յարմարին երբեք:

Է. Սեփա կրկնութիւնք նոյնանշան բառից՝ ի մի և ՚ի նոյն բանի:

Է. Տարապարտ կրկնութիւն բառից և իմաստից:

Թ. Բռնի հոլովումն անուանց, դերանուանց և դերբայից արտաքոյ օրինաց զբարաւին և հարաւին:

Թ. Բռնի ածանցումն և բարդութիւն բառից:

Ժ. Բռնի խոնարհումն բայից:

Ժ. Մանր կամ թեթեւ սխալանք, ընդ որովք իմանալք և զտեղգրութիւնս բառից, առանց որոց բանն իմացեալ լինի լին:

Ժ. () ատարագի անուանք բոսոյ, անկոյ, հանքաց, կշռոց, չափոց և կենդանեաց նոյնութեամբ ՚ի դործածեալք առանց հայերէն ծանօթութեան: Առ բաց յայտմանէ յատուկ և հասարակ անուանք զատիւ թարգմանեալք ՚ի լատինեաց փոխին ՚ի լիւն, կամ այլադք փոխին, և այլադք յանդաւորին ընդդէմ սովորութեան լեզուիս:



ԿԼԵԳ՝ ԼՌԼՃԻՆ

31. Բառք և բանք զբարաւք՝ նոյնութեամբ յառաջ բերեալք իբր նորալեզու աշխարհաբարք յոյժ փոքր զանալանութեամբ:

Բառք.

արշալոյս. անժխախիլ. անդլիս գործ. ատաղճագործ. արմատախիլ. ապառաժ. տպարանք. անտատ. անտառային հիւրք. ապիրախա. առաջնորդել. արգարե. եղջիւր. այծեամն նապաստակ. ճագար. իսածանէ. լիզանէ. խրճիթ. աակառ. կապիկ. շինական. վանկեք. շանմարան. տուտր. քրքիջ. խորազիմայ. մանկկա իկ. քէշական. Ծնշիլ. Ժլառ. շիջուցանել. վարսալլիւրայ. սովորել. շիզաշոյիաց. խառութիւն. պի-

տակ, որնաշար, փանկուշակներ, մանկածու, ստիկտա, եղ-
րակացութիւն, ելերտրական, շարունարարութիւն, փայլայեղ,
սպառնամ, ծիրանադղեւտ, դահիճ, գղեակ, կախարդ, զմայ-
լեցացիչ, կարկաչեւթ, երկճիւղ, շառաչեւն, միմեանց, երե-
րաց, արսար, արսարական, սղջոյն սահմաններ, փառաբան-
փամե, կարկաչեց, դիմեցի, մերժեւ, ըստ որում, այսու
ամենայնի, ի վերայ այս ամենայնի, արտարին, նմանաբան,
ծափ, ծափ, ժպտումէր, սպաշաւելով, սպասուար, թու-
լամտութիւն, քաջութեան սրակ, մարդահաճոյ խաբեբա-
յութիւն, ճեղքեւ, յատակ, ծանուցանել, որովհետեւ, մին-
չեւ այսօր, մինչեւ այժմ, աստուածարժան, արքայալայեղ,
մարդ ցանկալութիւն, սրինդ, շունջ, կիտաբուրան կազմեցին,
տաղանդ, մնաս, տախեր, ցնցիւնք, աղօտ խանչիւնք, շէւնք,
կողեղապին ունացք, անընդհատ, :

Եւս ամենայն եւ այլ բաղումք են ճիշդ բառք
զրոյ, եւ մեծու մասամբ խրթինք եւ դժուարեանք,
որոց փոխանակ՝ եթէ կամէր, զայլ հեշտիմաց բառ
ի դարձ անէր, զորս ունիմք յաշխարհարաւի:

Բանք:

,, Օգաց խիոյն. 41: Եւ այնքան եւս դունաթափ,
այնքան եւս նստալ, այնքան եւս կիտամեւ է այսօր:

,, Ունի՞ դա վիւյ կամ՝ ասպոցոյց: — — Բախճը,
կապելը եւ օձը հանգիստացան դատարանի մէջ. 146: Եթէ
Բատա ամ վեպի է ընդդէմ քո: . . . Բայժմ Սկնեախ-
կեան համարակապիտութիւնը կառարումէ այդ խոտումը:
147: :

,, Բայց երկու աւելի հասակաւ որքը պատասխանեցին,
Եթէ կամք չունէին երբեք ամուսնանալ, եթէ չգտանէին իշ-
խանաւոր փեսայք. 147: Դա շատ պատուական աղջիկ է:
Դա այնքան հեղարարոյ եւ համեստ էր, կարող չ'էի վերըն-
ալին դարձուցանել իմ հօր գոյրք. 148: :

,, Յանկարծ նայելով դէպ ՚ի մի ծառաղարդ ճանա-
պարհի վերջ. . . 149:

,, Եթէ ձեր աղջիկները կամք չունէին մեռանել փո-
խարէն ձեր. . . 151:

,, Բաւ որում՝ այսպիսի պատուական հացիկըութիւն է

պատրաստել ինչ, . . . 153:

Այսին ժամ տիկինն բարե սիրտ ունիմ ես, բայց հրէշ եմ, . . . 155:

«Ի վերայ այդք ամենայնի դողդողալով սասոց նա . . . 156:

«Բայց այնպէս փափաղելի էր ինչ կրկին անգամ աշտանել իմ հայրը, . . . 156:

«Աստուածացաւ միայն միսս եւ ու թօր, . . . 158:

«Աս շնչեց որպէս հոգմի սօսութիւն ծառ երկ կատարել վերայ. կամ որպէս փոքրիկ ալեքներ ծովափի մաս եւ խօսեց այսպէս. Աս ողակից էի Սարգսզ թողաւ որքն նորա ճեղհապարհորդութեանն . . . բայց սպասում էր միայն դիպուկ ժամանակի, . . . 194:

«Հպարտութիւն, նախանձ, ժառու թիւն եւ բարեկուկութիւն խառնակութեան նոցա զեղեցիկ զուգորդութիւն թիւնը, . . . 195:

«Բո զայնսնը է այն փոսկրեայ դու աղանը, . . . 196:

«Եթէ դու քո արքայական գաւառները իմաստութեամբ վարես, ապա ե դու կարող ես տեղեկանալ այն բնութիւնը բաներին: Այնուհետեւ քո աչքերը եւ ականջները փոխանակ այն ոսկեզէն զնամակին կըսպասաւ որքն քեզ. Աս ծառուցի քեզ: Այլ պայծառ անայ քո աչքը արդէս արեգակն, . . . 197:

«Օրօնում էր սենեկի մէջ զուարթ եւ երախտաւոր նազ դէմքով, . . . 143:

«Տաշտեայի էր ամենայն աշխատութիւն այնպէս, որ նա անձնատուր եղաւ դատարկութեան եւ ծուլութեան, . . . 198:

«Այնու ամենայնի, անաղտ զեղեցիկութեանով փայլում էր նա, որպէս երկնաւոր լուսնի դառալ, . . . 200:

Այս ինչ հակառակաբանութիւն է, ասոց արտասանին, . . . 201:

«Պիտոյ է բնակեր թոյնի բաժանի, . . . 203:

«Թագաւորանէր մի այնպիսի ապահով փոքրում, . . . 4:

«Արտեման աղպէս էր իմ բնութիւնը, բայց ես իմաստութեամբ յայտնեցի բնութեանն. . . Այնուամենայնիւ տեղ եւ հիմնապէս բաժնաւ. 55. Այլը զարթնում եւ աշտան

նէ, թէ անգլուի էր, 21:

„ Սիծանուն ճարտարապետ բարձրածին բանաստեղծ
ծուծեան մէջ, 41:

„ Դատ երջանիկ համարէի իմ անձը, եթէ այդպիսի
սի պրահանութիւն պաշտպան լինէր իմ հայրենիքին, 64:

„ Քաջութեամբ գործել և քաջութեամբ համբերել
սակար են Հոգեւորացիք, 63:

„ Երկիրս չ'է երկիրք, բայց չ'է նոյնպէս մի ցաւալեց
ձոր: Մարդիկ չ'են հրեշտակներ, բայց չ'են նոյնպէս ստատե
նայք, 404:

„ Կանոն ու բեռնապատ հողածախները հանդիպելով
ապականիկն անթմերին, ջարդակցան սորոս և փառաւոր վարձ
դաճարը լծակեցաւ յատակի վերայ, 102:

„ Սոսքը յոյանի էր ինքեան միայն, 163:

„ Լեռնայն տեղակի վառակոյր վայելչութիւնը նա
զեցացին նորոս ունեցած արձախն ու սակին, 167:

„ Բայց մի այլ ոք վճարել է փոխանակ ձեր, 169:

„ Իւր արժեքը անխափր առատաձեռնելով ամենայն
մարդու, 166:

„ ()ը ըստ օրէ աւելի պայծառապէս փայլատուում
էր, 179:

„ Բունը կը նորոգէ քո սպասեալ զօրութիւնք, 221:

„ Եւ ձիւնափայլ ծածկոյցը անմեղութեան նշանէ, 221:

„ Մի մեղով հանդիսաւոր բազմաձայնեաց երգասացու
թիւն, 222:

„ Եւ ամենայն մարմնք ունին մէջ սեփական կշիռ և
ծանրութիւն, 314:

„ Բայց ոչ առանց աստուածային օրհնութեանք, 419:

„ Երաստածային հաճութեան մին առանձին ապա
շրջ, 390:

„ Դատ անգամ է միայն անձնական շահասիրութեան
ունեցեալութեան և բնական ձգտողութեան ծնունդ, 392:

„ Երաջութիւնը գիտութեամբ աւերել, 398:

„ Իսկ էր լինել աղքատ արդարութեամբ, քան թէ
հարստ անիրաւութեամբ, 399:

„ Մասնաւոր կեանք է գիտոց առարկանութեան բա

դարձան հատ ախարա թխնը է դարաց խահեմ թեան, լառ
թեան և մարդահաճա թեան, պատերազմը է դարաց քաջու
սրբառ թեան, վաճառական թխնը առաջմարտն կարգի և
ճիշդ դարձակաարտ թեան, 426:

11 Հոգեշարժ զա գաճայնա թեամբ բարձրացա ցին իւր
եանց երդասացա թխնը մինչև ամպերը, 481:

11 Ի՞նչ կամի՞ տղա մի վաղ ապհան և ում կամի՞ իրո
տանայ, Բայ, Գէպ, առ նախագրա թեանց վերայ
միշտ սգորեմ է և նախ գլօր վարէ զնոսա՝ բայց ՚ի
սորանից, Կէպ ՚ի Բոտամ, առ ՚ի սրտէ, բայց
զխղճալի միջան զբէկ յայսմ շնորհէ սկսմա թեան
իւրայ, և աննախգիր արականու ՚ի գործ ամէ զնա
թէ առա և թէ աչաւ:

11 Մտաւ արեւը շողալեցին հոգեպայծառ յառաջ, 137:

11 Բայց ՚ի վերայ այդ սմեղայնի զիւղացին չկարողա
ցաւ կարդալ անհնոցադ արծը համբերա թխնը կորուսանելով
առաջ նորան բարկա թեամբ, 26:

11 Կարելի էր կարծել թէ նա որպէս Բոտամից հրեշ
տակ ուղարկած էր մեզ, որ մեր մանուկը կրթի և դաստիա
բակէ, 175: Ար երբեք անսած չէր իրօք, 308:

11 Հանդիսաբար վեր բարձրացա, և մանուկ կապիւր
վայելա թեամբ զլախ առեց և բացալոյտ ճայնով առաջ,
Ի՞նչ և շնորհաւորեմ այս օր սի մեծաղօր, մեծախառ Կայսր
ա հի, 178:

11 Բայց ոչ թէ միայն նորա մօլմնաւոր զեղեցիկ
թեան վերայ ունէին նորա զարմանալ, այլև նորա բա
նական թխնը զուարթ ու ախորժելի էր, 179:

11 Խոստացա յօժարա թեամբ կատարել այդ հեշտ
պոյսմանը, 193:

11 Նորա հնարադրեցին ճարտարա թխնը և անօթք,
213:

11 Սի փոքր հնարքով հեշտ կրկաւարով արեւ բանը, որ
մեայ անկարող էր կատարել մի դէպքի Բոյճա-թիւն, 214:

11 Բոտամը կարող է նոյնպէս հոգ առնել իւր սնուն
դի և ապահով թեան համար, և հնարադրած լինել իւր
է՛լ Լաւրէի, 231:

ԿԼԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ

29. Բառական թարգմանութիւնք տարրերք բոլորովին 'ի մարտը Հայկաբանութենէ, յորայ բանք ինչ 'ի պատանհանական եւ: ուստի և նշանակին խաչանշանաւ:

„ Եւս Բարձրացաւ (Կամ ասել Կանգնեցաւ) 'Կաւ թը և զարկեց քնարի լարերէն: 201:

„ Ես ոչինչ խնդիր չունիմ: 141: — Չունիմ ինչ խնդիր:

„ Ես չէր այլ ևս խօսում ոչինչ մարդկային Բառ: 176: — Ես ոչ ևս խօսիք մարդկարար:

„ Երբա այնքան վատ չ'էին որ շեղարանային այլ ևս ծառայել ինձ: 101: — Վարդանայ ինձ:

„ Եղովնակ հողաթմբեր, չոյն արշափեց նա: դուք պիտի որ պիտի աւելնէ միտա չհաստցանեք ինձ: 102:

„ Կոսովա թիւերը ապական էր ապարանքի Երեսմբ: (մէջը) 109:

„ Իմ արքայական շնորհի թիւերը կը հաշուարեն քեզ: 190: — Հովանի կրկին քեզ:

„ Յայտալով նորան տապա պաշար փայտի, որ կարգով դրած էր միմեանց վերայ: 144: — Հատ պարտատաճ վրայ կարգով իրար վրայ դարձած:

„ Ունենալ մի մեծ բաղնա թիւն լցրած կարաններ: 165:

„ ✠ Եւս քեզ միւս երեսուն: 27:

„ ✠ Սա յայտնեց նորան, որ դեռ ևս պարտալծոր եղած չ'էր, և խնդրեց՝ որ հաճեցաւ ցանկ իւրեան: 26:

„ Ի՞նչպէս մեծ պիտայ է լինիք նա, որ կերպարեւել էր քեզ: 201:

„ Ինչպէս կարող ես դու դրանշանալ ցերեկի լուսանքի վերայ: Ըստ որում դու չ'էիր անսանում նորան: 201: Խլուայ վերայ:

„ Բառակցեալ ծաղկում է: 202: — Բայտը չ'է ծաղկում:

„ Հաւատարմութեամբ լատահալ: 105: Հաւատարմ:

„ ✠ Մարդիկներ իւր պարզ կերպարանքի մէջ ինչ:

քան աղագիկց կը Լ'առաւածեղենին, . 203:

„ ✠ Չնեղիային թնդ և խարազանով կտրատե՛, . 17:

„ ✠ Ինչո՞ւ պիտայ կը մեզ դէպ'ի մեր ապագայքը պազատ հոգաբարձու գտանով , քան թէ մեր առաջնորդ դէպ 'ի մեզ գտանով են, . 109: „ Գ'եր պատուելի ոչինչ քան բայ 'ի ստիպ ազիւս և ճարտարագիտական գործերից , . 404: — Գ'եր ինչ յարգելի, և այլն:

